



ՍՈՒՐՔ ՖԱԿՈՐ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ԵՆԵՅԻ

ԽԱՉԿԵՐԱՅԷՆ ԵՏՔ ԻՆՆԵՐՈՐԴ ԿԻՐԱԿԻ
18 ՆՈՅԵՄԲԵՐ 2018

Կիրակնօրեայ Ընթերցումներ Էջ 1
Ծանուցումներ Էջ 2

ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ (25.9-26.7)

Այն օրը պիտի ըսեն. «Ահա ահա, մեր Տէր Աստուածը, որուն ապաւինած էինք: Անիկա փրկեց մեզ, որովհետեւ ի՛նքն է Տէրը որուն յուսացած էինք: Յնձանք եւ ուրախանանք մեր փրկութեան համար»: Որովհետեւ այս լերան վրայ Աստուած մեզ պիտի պաշտպանէ, իսկ Մովսէսը պիտի կոխկռտէ այնպէս՝ ինչպէս յարդը կը կոխկռտեն կամնասայլով: Այո՛, Աստուած իր ձեռքը պիտի երկարէ եւ զայն խեղճացնէ ու կորուստի մատնէ, զայն վար բերելով այն բարձունքէն որուն կը ձգտէր ան: Աստուած պիտի փլցնէ քու բարձր եւ ամուր պարիսպներդ, ո՛վ Մովսէս, զանոնք գետնին հաւասարեցնելով: Այն օրը Հրէաստանի մէջ հետեւեալ երգը պիտի երգեն. «Զօրաւոր է մեր քաղաքը, որովհետեւ մեր Փրկիչը ի՛նքն է անոր պարիսպն ու պատուարը: Բացէ՛ք դռները, թող ներս գայ արդարութեան հետեւող եւ ճշմարտութիւնը պահող ժողովուրդը. այն ժողովուրդը, որ ճշմարտութիւնը կը պաշտպանէ

եւ խաղաղութիւնը կը պահպանէ: Միշտ քեզի՛ յուսացինք, Տէ՛ր, ո՛վ Աստուած, մեծ եւ յաւիտենական. դուն, որ խոնարհեցուցիր եւ վար ձգեցիր երկինքի բնակիչ հրեշտակները, պիտի կործանես նաեւ մարդոց հզօր քաղաքները եւ զանոնք գետնին պիտի հաւասարեցնես: Խոնարհներն ու հեզերը միայն պիտի բնակին այդ քաղաքներուն մէջ, եւ տնանկները պիտի երթան հոն հաստատուելու: Բարեպաշտներու ճամբան ուղիղ է, Աստուած հարթած եւ պատրաստած է անոնց ճամբան»:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՓԻԼԻՊՊԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ (1.1-11)

Պօղոս եւ Տիմոթէոս, Քրիստոս Յիսուսի ծառաներս, կը գրենք ձեզի՝ Քրիստոս Յիսուսի միացած բոլոր հաւատացեալներուդ որ Փիլիպպէի կողմերը կը բնակիք, ինչպէս նաեւ եպիսկոպոսներուն ու սարկաւագներուն: Թող Աստուած մեր Հայրը եւ Տէրը Յիսուս Քրիստոս շնորհք եւ խաղաղութիւն պարգեւեն ձեզի:

Ամէն անգամ որ ձեզ յիշեմ՝ գոհութիւն կը յայտնեմ իմ Աստուծոյս: Ամէն անգամ որ ձեր բոլորին համար կ'աղօթեմ՝ ուրախութեամբ կ'աղօթեմ,

որովհետեւ առաջին օրէն մինչեւ հիմա ձեր մասնակցութիւնը բերիք աւետարանչութեան գործին: Եւ վստահ եմ թէ Աստուած, որ այդ բարի գործը սկսաւ ձեր մէջ, գայն իր կատարումին պիտի հասցնէ մինչեւ Քրիստոս Յիսուսի օրը գայ: Իրաւունք կը համարեմ այսպէս խորհիլ ձեր բոլորին մասին եւ ձեզ սիրտիս մէջ ունիմ, որովհետեւ բոլորդ ալ մասնակից եղաք ինծի վիճակուած շնորհքին, ըլլա՛յ բանտարկութեանս ընթացքին, ըլլա՛յ երբ ազատ վիճակով Աւետարանը կը պաշտպանէի ու կը հաստատէի: Միայն Աստուած գիտէ թէ ո՛րքան կարօտցած եմ ձեզ, Քրիստոս Յիսուսի գործովովը:

Իմ աղօթքս է որ ձեր սէրը աւելի եւ աւելի աճի աստուածգիտութեամբ եւ կատարեալ դատողութեամբ, որպէսզի կարենաք լաւը ընտրել եւ Քրիստոս իր գալստեան օրը ձեզ գտնէ մաքուր եւ անբասիր, եւ Յիսուս Քրիստոսի միջոցաւ արդար գործերով հարստացած՝ պատճառ ըլլաք որ Աստուած փառաւորուի եւ գովուի:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ
(9.44-50)

Մինչ ժողովուրդը կը զարմանար իր կատարած գործերուն վրայ, Յիսուս աշակերտներուն դառնալով ըսաւ. «Լա՛ւ մտիկ ըրէք եւ մի՛ մոռնաք ասիկա. մարդու Որդին պիտի մատնուի մարդոց ձեռքը»: Սակայն աշակերտները չհասկցան խօսքին իմաստը, որովհետեւ Աստուած իրենցմէ ծածկած էր՝ որպէսզի չհասկնան: Միւս կողմէ ալ կը վախճային իրեն հարցնելու այս մասին:

Աշակերտները, սկսան վիճաբանիլ թէ իրենցմէ ո՞վ է մեծը: Յիսուս գիտնալով անոնց մտածումը, մանուկ մը առաւ եւ իր մօտ կանգնեցնելով ըսաւ. «Ով որ այս մանուկը ընդունի իմ անունովս՝ զիս ընդունած կ'ըլլայ, եւ ով որ զիս ընդունած է, ընդունած կ'ըլլայ զիս ղրկողը: Որովհետեւ ով որ ձեր մէջ ամենէն փոքրիկն է, ան է մեծը»:

Յովհաննէս ըսաւ. «Վարդապետ, մէկը տեսանք որ քու անունովդ դեւեր կը հանէր եւ մենք արգիլեցինք իրեն, որովհետեւ քու հետեւորդներէդ չէ»: Յիսուս ըսաւ. «Արգելք մի՛ ըլլաք իրեն. որովհետեւ ան որ հակառակ չէ ձեզի, կը նշանակէ թէ ձեր կողմն է»:

ՏՆՕՐՀՆԷՔ

Տնօրհնէք փափաքող ընտանիքները,
քոյ բարեհաճին դիմել
Տ. Գառնիկ Աւ. Քինյ. Գոյունեանի,
հեռաձայնելով
514 909 5203 քիփն:

Այժեւեժէ՛ք ԵԿԵՂԵՃՈՅՍ
ԴԻԱՏԵՏՐԻ ԷՁՐ

ԵՒ ՁԵՐ ՀԱՔԱՆՈՒԹԻՒՆ ԵՎ ՍՆԵՃԵՔ
(like).

www.facebook.com/SourpHagopChurchMontreal

Այժեւեժէ՛ք ՆԱԵԻ
Ս. ՅԱԿՈԲ ԱՌԱՋԱՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ
ԵԿԵՂԵՃՈՅ ԿԱՔԷՁՐ՝
www.sourphagop.net

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ՍՈՒՐԲ ՔԱՂԱՔ

Հովանաորություն՝
Գերշ. Բաբգեն Արք. Չաբեանի
Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմին

Կազմակերպություն՝
Սուրբ Յակոբ Առաջ. Մայր Եկեղեցու, Մոնթրեալ
Եւ Սուրբ Գեորգ Եկեղեցու, Լաւալ

ՄԱՅԻՍ 7-18 2019



May 7: Depart from Montreal to Tel Aviv via Munich

May 8: Arrive at Tel Aviv, be greeted by our guide, drive to hotel

May 9: Tel Aviv / Ein Bokek, Dead Sea

- Visit Old Jaffa
- St. Nicholas Armenian Church and Convent
- Arrive at our hotel at the Dead Sea
- Swim in the dead sea, enjoy a mud bath ...

May 10: Ein Bokek, Dead Sea / Jerusalem

- Depart for Masada overlooking the Dead Sea (Cable car ride to the top)
- Visit Herod's many palaces
- Proceed to Ein Gedi, fabled spring of David
- Continue to Qumran, discovery site of Dead Sea scrolls
- Proceed to Jerusalem

May 11: Jerusalem

- Nativity Church
- Nativity Church - Armenian Monastery
- Shepherd's Field
- Israel Museum - Scale model of Jerusalem

May 12: Jerusalem

- Old City
- Church of St. Anne
- Pool of Bethesda
- Chapel of Flagellation
- Lithostrotos
- Arch of the Ecce Homo
- Arab Bazaar
- Church of the Holy Sepulchre, visit the Armenian Section
- Armenian Patriarchate of Jerusalem

May 13: Jerusalem

- Mount of Olives
- Church of Pater Noster
- Church of Ascension
- Russian Ascension Church
- Garden of Gethsemane, Church of all Nations
- The Tomb of Virgin Mary
- Armenian Seminary and St. James Cathedral (Sourp Hagop) at the Armenian Patriarchate of Jerusalem

May 14: Jerusalem

- Visit the Western Wall (Wailing Wall)
- View Mosque of Omar
- Visit the Jewish Quarter
- Walk along the Excavated Cardo
- Tour the Herodian Mansions

May 15: Jerusalem / Tiberias

- Leave Jerusalem for Tiberias
- Stop at ancient Jerico, visit the ruins of the city
- View Elisha's Fountain & the Mount of Temptation
- Travel to mount Tabor, Site of the Transfiguration of Jesus
- Continue to Nazareth to visit the Annunciation Church & St. Joseph's Workshop
- Drive to Tiberias

May 16: Tiberias

- Boat ride on the sea of Galilee
- Visit Capernaum
- Visit the Synagogue where Jesus taught
- Proceed to Tabgha, site of miracle of loaves
- Drive to Mount of Beatitudes, site of the Sermon on the Mount
- Drive to Caesaria Philip (Banias Springs)
- Visit Tel Dan, a Canaanite town
- Stop at Kursi, site where Jesus healed a man possessed by demons
- Proceed to the Jordan River for a baptismal service at Yardenit

May 17: Tiberias / Tel Aviv

- Drive to Cana of Galilee, where Jesus performed the first miracle
- Visit Mount Carmel and enjoy a magnificent view of Haifa
- End our visit at Caesarea, see the Roman theater and Herod's palace & aqueduct
- Drive to our hotel in Tel Aviv


May 18: Return flight to Montreal

\$4095.00 US



Յաղագս տեղեկություններու եւ արձանագրութեան համար շուտով հեռաձայնել կամ գրել՝
Կարօ Նոյնտանին 514 331-5445 ext. 202 - garo.nokhoudian@sourphagop.net / Գրիգոր Տէր Դազարեանին 514 918-6681 - krikordg@gmail.com
Հերմինէ Մանուկեանին 514 402-5137 - hermine.manoukian@gmail.com / Մարալ Պէքարեանին 416 858-2284 - maralbekarian@hotmail.com

ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ
ԲԱՀԱՆԱՅԱԿԱՆ
ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ
ԵՒ ՕԾՈՒՄ



ARMENIAN PRELACY OF CANADA
ORDINATION
TO THE
PRIESTHOOD

Ձեռամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ
Գերաշնորհ Ս. Բաբգեն Արք. Չարեանի
Ordination by H.E. Archbishop Papken Tcharian, Prelate

ԻԿԱՆ ՍՐԿ. ԳԵԱԴԱՅԵԱՆԻ DEACON IVAN GYADAYAN



Շաբաթ, 1 Դեկտեմբեր 2018-ին,

Սուրբեղի Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ մէջ
Քահանայական Կոչման արարողութիւն երեկոյեան ժամը 6:00-ին:

Կիրակի, 2 Դեկտեմբեր 2018-ին,

Քահանայական Ձեռնադրութիւն եւ Օծում
առաւօտեան ժամը 11:00-ին յընթաց Ս. Պատարագին:

Saturday, December 1, 2018

At St. Hagop Armenian Church of Montreal

Calling to the priesthood service at 6:00pm

Sunday, December 2, 2018

Ordination at 11:00am during the Divine Liturgy



Ս. ՅԱԿՈԲ ԱՌԱՋ. ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ

**60- ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻԻ
ՅՈՒԲԵԼԵՆԱԿԱՆ
ՃԱՇԿԵՐՈՅԹ**

Օրինութեամբ եւ Նախագահութեամբ՝
Գերշ. Ս. Բաբգեն Արք. Չարեանի
Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմին

Հովանաւորութեամբ՝
«Բաստրմաճեան» Հիմնադրամի

Կազմակերպութեամբ՝
Ս. Յակոբ Առաջ. Մայր Եկեղեցւոյ Հոգաբարձութեան

Շաբաթ, 15 Դեկտեմբեր 2018

Երեկոյեան ժամը 7:30-ին
Հայ Կեդրոնէն ներս

Մեղաններ ապահովելու համար հեռաձայնել

Տիկ. Նայիրի Բարախեանին. 514 891-4361

Եկեղեցւոյ քարտուղարութեան. 514 331-5445 x 202

Մուտքի նուէր՝ \$60.00